« 19 » փետրվար 2024թ. No 919 - Ա

«ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԱՎԱԳ ԲՈՒԺՔՈՒՅՐԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2024թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի Սիրտ-անոթային վիրաբուժության ամբիոն՝ Հասրաթյան 9) և առցանց («Զում» հարթակ)

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

- Գրություն՝ 25.03-05.04.
- Թիրախային լսարան՝ բուժքույրեր
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 30-50 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 22 տեսական և 17 գործնական կրեդիտ. դասընթացավար Գեղանուշ Ստեփանյանին՝ ՇՄԶ 22 տեսական և 17 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 010583101

Օր 1	
09:00-11:00	**Դասախոսություն** Միջին և կրտսեր բուժանձնակազմի կադրերի ընտրությունը, տեղաբաշխումը, ռացիոնալ օգտագործումը և նրանց աշխատանքի ճիշտ կազմակերպումը
11:00-11:10	Ընդմիջում
11:10-13:00	**Գործնական աշխատանք** Միջին և կրտսեր բուժանձնակազմի կարգապահության հսկումը՝ աշխատանքի ներկայանալու և աշխատանքային օրվա ավարտին դուրս գալու ստուգման ճանապարհով: Ներքին կարգ ու կանոնի, բուժպաշտպանական ռեժիմի, աշխատանքային հագուստի, աշխատանքի կարգապահության պահանջների հսկումը
Օր 2	
09:00-11:00	**Դասախոսություն**

	Բուժքույրերի և բժիշկների կողմից նշանակված բուժկանխարգելիչ աշխատանքների ժամանակին և որակով կատարման հսկումը
11:00-11:10	Ընդմիջում
11:10-13:00	**Գործնական աշխատանք** Դեղամիջոցների ժամանակին դուրսգրման ապահովումը, բժշկական սարքերի, դեղորայքի, վիրակապող միջոցների և ստանդարտ բլանկների պահպանումը և հաշվառումից դուրսգրումը
Օր 3	
09:00-11:00	**Դասախոսություն** Անհապաղ օգնության պայուսակների կոմպլեկտավորման հսկումը: Առանց բժիշկների աշխատող մինչբժշկական և պրոցեդուրային սենյակների համապատասխան հագեցվածության հսկումը
11:00-11:10	Ընդմիջում
11:10-13:00	**Գործնական աշխատանք** Բուժքրոջ հաղորդակցման ունակությունները և հմտությունները
Օր 4	
09:00-11:00	**Գործնական աշխատանք** Բժշկական փաստաթղթերի ճշգրիտ վարման վերահսկումը: Բուժկանխարգելիչ հաստատության սանիտարա–հիգիենիկ վիճակի, բուժ-պաշտպանական ռեժիմի և ներքին աշխատանքային կանոնակարգի վերահսկումը:
11:00-11:10	Ընդմիջում
11:10-13:00	**Դասախոսություն** Բուժքրոջ՝ որպես խնամք իրականցնող մասնագետի, հաղորդակցման կանոնները
Օր 5	
09:00-11:00	**Դասախոսություն** Բժշկական էթիկայի պահանջների պահպանում, հիվանդների հետ դեոնտոլոգիական հարաբերությունների հսկում: Նրանց մոտ պատասխանատվության զգացողության բարձրացում
11:00-11:10	Ընդմիջում
11:10-13:00	**Գործնական աշխատանք** Միջին և կրտսեր բուժանձնակազմի ուսուցման կազմակերպումը՝ նրանց մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով: Բուժքույրական կոնֆերանսների անցկացումը:
Օր 6	
09:00-11:00	**Դասախոսություն** Սանիտարահամաճարակային ռեժիմի իրականացումը և հսկումը
11:00-11:10	Ընդմիջում
11:10-13:00	**Գործնական աշխատանք** Բուժքույրերի խորհրդի աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումը
Օր 7	
09:00-11:00	**Դասախոսություն** Լավագույն բուժքույրերի աշխատանքի փորձի փոխանակման ուսումնասիրումը և կազմակերպումը, միջին և կրտսեր բուժանձնակազմի աշխատանքների որակի բարձրացումը
11:00-11:10	Ընդմիջում
11:10-13:00	**Գործնական աշխատանք** Բուժհաստատության ենթաբաժանմունքներից մեկի ամենօրյա շրջում անձնական գրաֆիկի համաձայն, որի ընթացքում ստուգվում է

	բուժքույրերի աշխատատեղերի կազմակերպումը, բժիշկների նշանակումների կատարումը, հիվանդների հիգիենիկ սպասարկման որակի, տարածքների սանիտարական վիճակի և հակահամաճարակային միջոցառումների անցկացումը
Օր 8	
09:00-11:00	**Դասախոսություն** Սթրեսի ազդեցությունը աշխատանքային գործունեության վրա
11:00-11:10	Ընդմիջում
11:10-13:00	**Դասախոսություն** Կանխարգելում. հուզական այրման համախտանիշից խուսափելու միջոցները, մեթոդները
Օր 9	
09:00-11:00	**Դասախոսություն** Բուժհաստատության ենթաբաժանմունքների միջև դեղորայքի ժամանակին ստացման և ճիշտ բաշխման հսկողությունը
11:00-11:10	Ընդմիջում
11:10-13:00	**Գործնական աշխատանք** Միջին բուժանձնակազմի կողմից տարվող ընթացիկ փաստաթղթերի ձևակերպումը և առկայության վերահսկումը
Օր 10	
09:00-11:00	**Դասախոսություն** Խոսքային հաղորդակցման միջոցներ: Խոսքային հաղորդակցման դերը, առանձնահատկությունները քույրական պրակտիկայում, որպես պացիենտի խնամքի կարևոր բաղադրիչ
11:00-11:10	Ընդմիջում
11:10-13:00	**Գործնական աշխատանք** Քույրական պրակտիկայում էթիկական և իրավական նկատառումները:

Դասընթացավար՝ Գեղանուշ Ստեփանյան